

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
ФАКУЛЬТЕТ БОГОСЛОВИЯ

YEREVAN STATE UNIVERSITY  
FACULTY OF THEOLOGY

# ՏԱՐԵԳՐԻՐՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

## ԺԱ

# ЕЖЕГОДНИК

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ

ТОМ XI

# YEARBOOK

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

VOLUME XI

ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ  
ЕРЕВАН - 2016

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ - 2016

YSU PRESS  
YEREVAN - 2016

## **ԱՍՏՎԱԾԱԾՆՉՅԱՆ ՆԵՐՐՈՎԹԸ ԵՎ ՆԵՄՐՈՒԹ- ԹԱԳԱՎՈՐԸ ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

*Անուշավան եպս. Ժամկոչյան, Լիլիթ Սիմոնյան*

Վանա լճից արևմուտք գտնվող Նեմրութ լեռնագագաթի և լեռան ստորոտում գտնվող քարաշարքի մասին պահպանվել է հայկական առասպելաբանության մի փառահեղ փունջ: Նեմրութի, այսպես կոչված, Ուղտի քարերի մասին առասպելներից, թերևս, առավել ընդարձակ և ամբողջական տարբերակը գրառել է Սարգիս Հայկունին՝ Խլաթի Քըրս գյուղացի առակախոս և հեքիաթասաց Արևշատից (մյուս անունը՝ Սարիբեդ): Պատումը մինչև այժմ անտիպ է եղել, այն ներկայացնում ենք ընթերցողին ամբողջությամբ<sup>1</sup>:

*Նըմրութայ բերդ մեր հանքի մեջ ա: Նըմրութ անըվով մէկ մարդ՝ յինք չճանչնար զԱստուած, ուր գեղքովն կասէր.*

*- Ես եմ Աստուած: Ըս մանդր-բեդ սարեր ես եմ տեղծեր, էրուն-թոչուն մանդր ու բեդ ես եմ տեղծեր: Աստուած ո՞ն ա:*

*Յաւոր մէկը լսեց թէ երկինքը Աստուած կայ: Հրամանք էրած.*

*- Որ ու ձեռաց ուստեք բերեք, շինիմ բանձր բերդ, մի գլուխ ելնի էրկնուց էրես: Էլիմ զանիմ էն Աստուածն օ կասին:*

*Հազար-հազար դաթերճիկ ուրանց խաթիլներ պատրաստեցան: Յըմեն պատրաստեցան, ասին.*

*- Քենի օ մեր տիրոջ խրամանքն ա, տեսենք ինչ խրամանք կենայ մեր գործին կայնինք:*

*Յըմեն ժողուան, գացին Նմրութ աստուծոյ մոտ:*

*- Մենք յըմենքս պատրաստ կայներ ինք, ի՞նչ նշանք պըտի տաս օ շինենք:*

*Ասաց.*

*- Էնպէստ բանձր ղուլուամի պըտի շինենք օ էրկնուց էրեսին սուն առի ու կայնի, օ գլուխը էլնիմ, ինչ օ կասին, աներևալի Աստուած կայ, զանիմ սպանիմ:*

*Էրկնքիցն Աստուած ի՞նչ մտքի մէջ էր, ի՞նչ միտք կէնէր.*

<sup>1</sup> ԳԱԹ արխիվ, Ս. Հայկունու ֆոնդ, ցուց. 56:

- Քենի օ ես եմ տեղծեր Նըմրույթն, չըմ յընցիր իմ տեղծածոց, ընայ օ իմ զօրութեն թը յիմանայ: Ինքնիկ նոր փոշվնի ուր էրածներուն:

Աստուած էլ էն մտքի մեջ էր, չըր յընցնի Նըմրույթի մօտէն, քենի օ ուր տեղծածէն էր: Ընկի օ Նըմրույթին երկու արդար բան կեն. թէ Նըմրույթ երկու արդար բան ի՞նչ էր. մէկ՝ ուր խացի գնդընէր ջոջ էր, մէկն էլ՝ ուր դրնդին ցածր էր, կկգէր, նոր դուրս կելլէր (ասել կուզէ, Աստուածոյ երկրպագութիւն կանէր):

Իրամանք տուողներ եկան. դէվանչոց բանի վերին դրիցին, թէ դուք ծովու պոկներուց աւագ կը կրեք, դարթոնոց՝ թէ դուք էլ քար կը կրեք: Նըմրույթ թագաւոր խրամանք էրած, ամէն գործի տէրն ուր գործին կայնի – քարտաշ ուր գործի վերէն կայնաւ, աւագ մաղող՝ զուր աւագ մաղեց, քիրէճ մաղող զուր քիրած մաղեց, նաճարներ կայնան ուրանց փեպերու զլէօխ, պատ շարողներ կայնան ուրանց պատի վերէն, թամալ դնողներ կայնան ուրանց թամալի վերէն, մոլոզ թափողներ կայնան ուրանց մոլոզի վերէն: Բոյուր-բոյուր ժողովուրդ, ազգեր կայնան Նըմրույթ աստուծուն տուղա էրեցին.

- Մեր աստուածը կը շինայ դուլան օ ելի էն էրկնուց Աստուածը սպանայ:

Էրկնուց Աստուածն տեսաւ թէ Նըմրույթն ուր մեղաց չզոջայ ու դառնայ.

- Ես ամենեցուն Աստուածն եմ:

Ձէդ դուլեն պաշլայեցին շինելը: Աստուած մրջմներուն խրամանք երաց: Քիչիկ-քիչիկ յուշիկ-յուշիկ մրջմները դուլի տակ մտան, փորեցին, ափրելու տըլպան: Ուստեք մէկտեղ կը բանձրացցին, մրջեմներ տակ կը դարդըկին: Տարի պե տարի մրջեմներ քընց կատու կեղին:

Թը ուստեք ուրանց բանի խեպ էղին, Նըմրույթ նեչիր աւղուշ կերթայ ուրին: Օրմ օրերուց խազալ մի խանեցին, էնու տղայ Հազրօ յընկաւ յիտն խազալին: Խազալն էր, սևութենից պրծաւ, զինք թալեց վըր ծիան շափին: Հազրօ պատ էղաւ, մընաց մըջ շափին: Բոլորի մշկներ հասան Հազրօ հաւարին: Ձիու ուրք քաշին շափից դուս խանին: Էնդեան ծակն ու վէր իշկեցին, տեսան խաղողի որթ օ էրկու քարի մէջտեղ բուսեր, ճութմ խաղող մօտէն կախուէր օ կայ խընչ դիտր մի: Հազրօն ասաց.

- Էլ չեմ հաւատար Նըմրույթ աստուածը, կը հաւատամ զէն Աստուածն, որ զճութ խաղողը տեղծեր ա ձեան տակ էս էրկու քարի արանքը: Ձէն Աստուած կհաւատամ:

Նըմրութ զէն խօսքը լսեց Հազրո բերնէն.

- Բոնե՞ք զը Հազրո: Սպանե՞ք, - ասաց:

Հազրո օ լսեց զէդ խօսք, խեծաւ զծին, փախաւ: Մշկըներ յըմենն ընկան երև ու լարեցին օ բոնեն: Հա էս դեղ, հա էն դեղ չոր Մշու դաշտ լարեցին: Մշու դաշտ Չուխուր աննով զաղէ մի կայ<sup>1</sup>, էնտեղ էրուն անուր գեղ մի կայ, էն տեղ էրունայ մէջ Հազրոյին կսպանեն\*: Երկնաւոր Տէր Աստուածը կգարմանայ Նըմրութայ էրած գործին, յօրի օ զուր տղայ Հազրոյին սպանեց: Աստուած լուս կը կաթըցուցայ Հազրո ջանդկի վէրին, լուս կամար կը բոնայ, աշխրքի չորս կողմը բոլոր կոսպաշտներ յախու կը սարսափին, կը դողան էն լուսից:

Նըմրութ օ զէդ լսեց, աւելի կատրուաւ: Ուրին նեպ ու անեղ շինեց, իննար ընկաւ ու առաւ ելաւ դուլի գլէօխ օ զԱստուած զանի սպանայ: Էն դդար էդ դուլեն բանցր էր: Նըմրութ էլաւ էն դուլի գլէօխ, իշկեց աշխրքի էրես, աշխարք խընչ կալ մի էրևաց աչիչ: Նմրութ զուր նեպ ու անեղ սաղեց, թալեց դըխ Աստուած: Աստուած ձուկ տուեց յառէջ: Ձուկ լաց ու աղաղակեց.

- Որ էն Աստուած, զի մը տայ էդ մեղաւորի նեպի յառջէն:

Աստուած ասաց.

- Մը շփոթե՛ր, քու արուն խալըլիմ իմ տեղծածին:

Եփոր Նըմրութ տեսաւ ուր նեպն էրկնքի երսեն եպ դարծաւ, վերուց իշկեց օ արնթաթախ էր:

- Ըհը, - ասաց, - երկնքի Աստուածն էսպէս կսպանենմ:

Էս ժամանակին մրջեմներ խըտ ասելուն դուլին փլուցին: Խմի տըկէն դուլի գլխու քարն ու Նըմրութ աստվածն ախշարքի ամեն մի եզրը ընկան: Էդա սհաթին լէ Նըմրութայ կող բոլոր իշկես՝ մալ, տաւար, օխշար, դէվեք բոնած են:

Կերթաս կիշկես, յըմեն ուր նմանակն ին, լը բալի քար են յըմեն:

\* Էրունայ սուրբ մի կայ Հազր բաբա կասեն: Ուխտի կերթան: Ով որ գողութին առած է, նորա դուռը պիտի գնայ, երդուի: Երբ չկարողացաւ մէկը գնալ, պիտի ուղղուի դէպի այդ ուխտավայրը, երեք քայլ պիտի առնէ, ասէ. «Ու՛վ Հազր, թէ որ սուք կերթուիմ, էս սահաթին զիս պատժե՛»: Սուր երդուողը պատժուած է միշտ:

<sup>1</sup> Ըստ Գ. Սրվանձոյանցի, Չխուր է կոչվել Մշո դաշտի արևելյան մասը, որի մեջ բխում է Մեղրագետը, գոյացնելով ընդարձակ շամբուտ, տես՝ Գ. Սրվանձոյանց, Երկեր, հատ. 1, Երևան, 1978, էջ 417:

Այս պատումը, հարկավ, միակը չէ: Նեմրութին նվիրված առասպելաբանությունը տարածված է եղել առնվազն երեք հարակից ազգագրական շրջաններում՝ Մշո դաշտ, Հարք, Խլաթ: Այս մեկը, սակայն, առանձնահատուկ է ոչ միայն իր ընդարձակ և հարուստ սյուժեով, այլև այն բանով, որ միմյանց է կապում հեթանոս-թագավոր Նեմրութին և Ժողովրդական-քրիստոնեական սրբավայրի հիմնադրումը Մշո Էրունա գյուղում:

Նախ փորձենք ի մի բերել պահպանված հայկական այն բոլոր առանձին պատումներն ու պատառիկները, որոնք վերաբերում են Նեմրութ թագավորին և դիտարկենք դրանք աստվածաշնչյան Նեբրովթ հսկայի մասին սյուժեի ներքո:

Ն. Սարգիսյանի շարադրած պատմությունն ունի միևնույն սյուժեն, ինչ քննարկվող տարբերակը, մի փոքր այլ մանրամասներով: Նա հայտնում է, որ Նեմրութ լեռան հարավային ստորոտից դեպի Դատվան հասնող ձորի մեջ են գտնվում Ըղտաքարեր կոչվող փղից երկու անգամ մեծ ժայռաբեկորները, որոնց թիվն անցնում է վաթսուներից և որոնք շարված են մեկը մյուսի ետևից՝ քարավանի նման: Ժողովուրդը համարում էր, որ դրանք են «ուղտերամակս Նեմրութայ անիծիւք ‘ի քար դարձեալս» և պատմում էր հետևյալ պատմությունը:

Նեմրութ բռնակալ թագավորը, գրավելով հարավային մի շարք տարածքներ և այս վայրերն էլ հասնելով, կամեցել էր այնպիսի մի հիշատակ թողնել իր մասին, որ բոլորը նրան աստված համարեին, միակ և հաղթական աստվածը: Նա ահռելի բարձր դաստակերտ շինեց լեռան գագաթին, և այդ բերդի ամբողջ շինանյութը ուղտերի քարավանով բերել տվեց Դատվանի ծովեզերքից: Հետո բարձրացավ իր շինության տանիքը, աղեղն ի վեր լարեց, հավակնելով սպանել Աստծուն, որ միայն ինքը կարող էր: Սակայն Աստված ծովից մի ձուկ հանեց և դրեց նետի դիմաց: Երբ նետը դիպավ ձկանը, արյուն հոսեց վերից վար, ու Նեմրութը ցնձաց, կարծելով, թե սպանել է Աստծուն: Մինչդեռ ինքն իր մարդկանցով ուրախանում էր, Աստծո բարկությունը շարժվեց, և Նա կայծակ թափեց երկնքից: Ուղտերամակները քար դարձան իրենց տեղում, իսկ Նեմրութն իր շինվածքով հանդերձ անցավ գետնի տակ՝ լեռան գագաթին: Նրա գետնասույզ եղած տեղից հորդ ջուր բխեց, որ ծածկեց անօրենի հի-

շատակը և շինության հետքերը: Այսպես գոյացան լիճը Նեմրուֆ լեռան գագաթին և ձորամիջի Ըղտաքարերը<sup>1</sup>:

«Արձագանք» թերթի մեջ 1882 թ. հրատարակվել է Նեմրուֆ նույն առասպելի ևս մեկ տարբերակ: Համաձայն դրա, Նեբրովթա լեռները, կամ թրք. Նիմրուտ-դաղ, քրդ. Ճիտե Նեմրուտ և արաբ. Ճեպելի Նեմրուտ լեռնաշղթայի մի գագաթն էր Գրգուռ լեռը, որը նույնպես կոչում էին «Նեբրովթայ լեռոն»: Տեղացիները համարում էին, որ այն բարձրությամբ երկրորդն էր Մասիսից հետո: Լեռնագագաթին յոթ լիճ կա, որոնցից առավել նշանավոր է այն մեկը, որտեղից գետնի տակով ջուրը գնում և վերածվում է Մեղրագետ գետի: Կարմունջ գյուղի եկեղեցու պատի արձանագրությունը հիշատակում էր Գրգուռի ժայթքումը 1352 թ., իսկ գյուղացիները պատմում էին մեկ այլ ժայթքումի մասին, որ տեղի էր ունեցել 1441 թ., որից հետո Գրգուռը ճեղքվել էր և ուժգին որոտումով քարեր նետել դեպի երկինք: Այդ լեռան հարավային ստորոտում, ձորի մեջ կողք-կողքի շարված են եղել մոտ 60 հսկայական քարեր, որոնց մասին բնակիչների մի մասը ասում էր, թե դրանք սատանայի գերեզմաններ են, իսկ մյուս մասը՝ թե Նեբրովթի ուղտերի քարավանն է, որ քարացել է: Ըստ նրանց, Նեբրովթը մի բռնակալ թագավոր էր, որ հարավային շատ աշխարհներ տիրելուց հետո եկել էր այստեղ և իրեն աստված հայտարարել: Նա կամեցել էր Գրգուռի գագաթին մի փառահեղ շինություն կառուցել, որ պիտի դառնար իրեն պաշտելու վայր: Դատվանի ծովեզերքից նա ուղտերով ավազ էր բերել տվել շինարարության համար: Երբ շինարարությունն ավարտվել էր, Նեբրովթը բարձրացել էր դրա տանիքը և աղեղը լարելով նետն ուղղել դեպի երկինք, կարծելով, թե կարող է Աստծուն սպանել և միակ պաշտելի էակը լինել: Աստված մի ձուկ էր պահել նրա նետի դիմաց, և երբ նետը դիպել էր ձկանը, առատ արյուն էր հոսել դեպի երկիր: Այդժամ բռնակալը հայտարարել էր, թե ինքը սպանել է Աստծուն: Սակայն Աստծու բարկությունը շարժվել էր, և երկնքից կայծակներ էին թափվել: Շինությունը փլվել էր, իսկ ինքը Նեբրովթը իր մեծամեծներով կործանվել էր անդնդի մեջ, որը լցվել էր ջրով և լճի վերածվել: Բեռնակիր ուղտերն էլ ճանապարհի վրա քար էին դարձել: Ահա թե ինչու այդ քարերը կոչվում են Ըղտաքարեր կամ Նեմրուտ տէվէլերի<sup>2</sup>:

<sup>1</sup> **Ն. Սարգիսեան**, Տեղագրությունք ի Փոքր եւ ի մեծ Հայս, Վենետիկ, Ս. Ղազար, 1864, էջ 273-274:

<sup>2</sup> **Մկո**, Խլաթ գաւառը// «Արձագանք», Թիֆլիս, 1882, № 24, էջ 376-377:

Մ. Միրախորյանը լեռն ինքը կոչում է Նեբրովթ (Նեմրուդ) և նշում է, որ այդ անունն առնված է Նեբրովթի գերեզմանից, որ գտնվում է լեռան գագաթին, «որոյ մէկ կողի վերայ այժմ կը տեսնուի երկայն դամբարանի նման մի շէնքի հիմունք»<sup>1</sup>: Լեռան գագաթի տրամագիծն, ըստ Միրախորյանի, կազմում էր 2,5 ժամ, դրա վրա գտնվում էին 5 լճակներ, որոնցից մեկից գետնի տակով ջուր էր հոսում դեպի Նորշենա դաշտ և դուրս էր գալիս «Մեղրաջրոյ ակն» տեղում, այսինքն, Մեղրագետի ակունքում: Այդտեղից բավականին հեռու, Ջրհոր և Շամիրամ հայաբնակ գյուղերի մոտ կար Խաթուն-տերե կոչվող մի վայր, որ մերձ էր Նեբրովթին կից ձորակին: Ահա այդ ձորակում էին գտնվում բազմաթիվ մեծ, շարքով կանգնած քարերը, որոնց կոչում էին Ըղտաքարեր: Միրախորյանի տարբերակի համաձայն, զորավոր Նեմրուդ թագավորը, շատ երկրներ նվաճելուց հետո եկել էր այստեղ և լեռան վրա մի հսկայական պալատ շինել՝ Վանա լճի կողմից բերված շինանյութով, որ ուղտերն էին կրում: Երբ շինությունը պատրաստ էր, Նեմրուդը որոշել էր այնպես անել, որ իրեն պաշտեն Աստծո փոխարեն, իսկ Աստված այդ ամբարտավանության պատճառով անիծել էր Նեմրուդին և նրա ուղտերին: Ուղտերն այդ անեծքից քար են դարձել, իսկ Նեմրութն իր պալատով գետնի տակն է անցել: Շինության տեղը ջրով է լցվել, որպեսզի Նեմրուդի հիշատակն իսպառ վերանա երկրի երեսից<sup>2</sup>:

Ինչպես տեսնում ենք, այս երեք պատումները, որ հեղինակների կողմից վերաշարադրված են և ոչ՝ գրանցված իրենց բնիկ ժողովրդական ձևի մեջ, գրեթե համանման են, մինչդեռ Ս. Հայկունու գրառածն ավելի ճոխ է մանրամասնություններով և գեղարվեստականությամբ, ինչպես և վայել է բուն ժողովրդական պատումին:

Բենսեն գրառել է Բուլանըխում պատմվող ևս մեկ տարբերակ: Բենսեի տարբերակը վերաբերում է միևնույն քարերին՝ ըստ իր բնորոշման, «Դատվան գյուղի մի ձորակում»<sup>3</sup>: Այս տարբերակը<sup>4</sup> միջանկյալ դիրք է գրավում Հայկունու և մյուս հեղինակների տարբերակների միջև, քանի որ մի կողմից գոնե մասամբ ուղիղ ժողովրդական-բարբառային ձևի մեջ

<sup>1</sup> **Մ. Միրախորեան**, Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս Արեւելեան Տաճկաստանի, Կ. Պոլիս, 1984, էջ 77:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 80:

<sup>3</sup> **Բենսե**, Բուլանըխ, Հայ ազգագրություն և բանահյուսություն, 3, Երևան, 1972, էջ 50:

<sup>4</sup> **Բենսե**, Հարք. Մշոյ Բուլանըխ// ԱՀ, գ. 2, 1900, էջ 28-29:

է, մյուս կողմից՝ պարունակում է մրջյունների կողմից բերդը քայքայելու մոտիվը: Նեմրուֆն այստեղ իրեն աստված չի հայտարարում, սակայն նույնպես բարձրանում է աշտարակի գլուխը և նետով կրակում է՝ ոչ այնքան Աստծուն սպանելու մտադրությամբ, այլ ավելի շուտ՝ պարզելու համար, գոյություն ունի՞ Աստված, թե՞ ոչ, քանի որ ժողովուրդը, նեղվելով բերդի կառուցման հետ կապված կեղեքումից, Աստծո պատժով է իրեն սպառնում: Երբ երկնքից երկու ձուկ վայր է ընկնում, որոշում է, որ Աստծուն է սպանել: Աստծո հրամանով շան մեծության մրջյուններ են գոյանում և քանդում են բերդի հիմքը: Բերդը փլուզվում է, մի քարը թռնում-հասնում է Ուռհա (ըստ Բենսեի, այս վերջինը պատկերավոր արտահայտություն է՝ հիմնովին կործանումը ցույց տալու համար): Բենսեն հավելում է նաև, որ բացի Նամրուֆի դէվէք կոչվող քարերից, որոնք հիշատակվում են, թերևս, բոլոր տարբերակներում, եղել են նաև «պարսնտքարեր», որ իբր այն ժայռաբեկորներն են, որոնք հսկա Նեմրուֆը լեռան գլխից նետել է իր պարսատիկով<sup>1</sup>: Վերջին հիշատակությունը ակնհայտորեն կապվում է հրաբուխի պատմական ժայթքումի հետ:

Մի կարճ տարբերակ գրառել է նաև Ս. Հարությունյանը.

«Նամրուֆ մե կռապաշտ մարդ էղեր ա: Դավաքներով խող կկրեր Նամրուֆա սարի կողմեն, օր բլույ շիներ, բանձրներ Աստծու խետ կովեր: Աստծու խրամանով էդ դավաքներ քար դարձան: Նամրուֆն էլ բլույի վրեն խողի տակն անցավ: Հառևանց որ իշկես, կըսես՝ դավէք են, գնաս մոտ՝ քար են: Էդ բլույ էլ Նամրուֆ լեռն ա:»<sup>2</sup>: «Նամրուֆ իբր մե անտես մարդ էղեր ա, մուռ կախ էղեր ա. էդտեղից էլ նամրուֆ մարդ»<sup>3</sup>:

Այս առասպելը երբեմնի ունեցել է հավատալիք-շարունակություն, համաձայն որի Նեմրուֆը ոչ թե մեռել է, այլ փակված շարունակում է ապրել նույն լեռան ընդերքում, հնարավոր է, մի օր դուրս գալու ակնկալիքով: Այդ է վկայում «Հյումմեի խսրախ» ժողովրդական հեքիաթում ի հայտ եկող Նեմրուֆ թագավորի առասպելաբանության այն մոտիվը, որ հայտնի չէ ավանդազրույցներից: Տղա դարձող աղջկա տիպին պատկանող և Ե. Պեզազյանի կողմից Բասենի Նարման-Էքրեկ գյուղացի Հակոբ Սանոյանից գրառած այս հեքիաթի մեջ առկա է միանգամայն ուրույն մի

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 30:

<sup>2</sup> Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 73:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 432:



դրվագ: Ճամփաբաժանի վրա ձին լեզու է առնում և ասում է մտազբաղ աղջկան. «... այսինչ ճամփեն էլ Նեմրուֆ թագավորի քաղաքը կերթա: Էս ճամփեն վայրենի քարիմ գլուխ գելլե, որ Նեմրուֆ քաղաքը կերևա...»<sup>1</sup>: Այս հեքիաթում Նեմրուֆ թագավորի քաղաքը կարելի է հասնել միայն ժայռի վրայից դեպի անդունդը նետվելով: Անցնելով մի շարք փորձություններ և տղամարդու վերածվելով, հերոսուհին մնում է այդ քաղաքում: Այսպիսով, հեքիաթը հուշում է, որ ինչ-որ տեղ խոր անդունդում Նեմրուֆ թագավորը ոչ միայն ապրում է, այլև քաղաք ունի: Եթե համադրելու լինենք հեքիաթի այս մոտիվը առասպելների հետ, ապա կստացվի, որ ըստ ժողովրդական պատկերացումների՝ «անդունդի տակն անցնել» միանշանակորեն չի նշանակում մեռնել: Նեմրուֆը դառնում է մի տեսակ անդրաշխարհի քաղաքի տիրակալ և չի կիսում ժայռում փակված Փոքր Մհերի, շղթայված Արտավազդի, կես-կենդանի կես-ողջ Արևամանուկի ճակատագիրը, այլ որոշ չափով նմանվում է Արա Գեղեցիկին, այսինքն, ինչ-որ չափով լեռ է, ինչ-որ չափով՝ կենդանի արարած և արքա: Այս պատկերացման համար, անկասկած, հիմք են դարձել լեռան պարբերական հրաբխային ժայթքումները, որ իբրև թե վկայում են Նեմրուֆի կենդանությունը:

Պետք է, սակայն, հաշվի առնել, որ ի տարբերություն առասպելների, այս հեքիաթի հայրենիքը Բասենն է, և ասացողը չի նշում, որ «վայրենի քարը» միևնույն Նեմրուֆ լեռն է ու չի հիշատակում քարացած ուղտերին: Այդուհանդերձ, սա ևս մեկ կարևոր սյուժե է Նեմրուֆ թագավորի մասին:

Աշխարհագրական միևնույն վայրի, ավելին՝ քարե ուղտերի միևնույն շարքի շուրջ մի քանի տարբերակների ձևով հայտնի ժողովրդական պատումը վկայում է, որ գոնե Խլաթի և Հարքի բնակիչները իրենց հայրենիքի նախապատմական անցյալը կապում էին աստվածաշնչյան Նեբրովթի անունը կրող գոռոզ և աստվածամարտիկ բռնակալի հետ, որին ակնհայտորեն համարում էին հսկաների ցեղից սերված, այսինքն՝ ոչ սովորական մարդ:

Ինչպես հայտնի է, Աստվածաշնչի մեջ Նեբրովթը հիշատակվում է միայն Ծն. Ժ. 8-12-ում.

«Եւ Քուշ ծնաւ զՆեբրովթ. նա սկսաւ լինել (հ)սկայ ի վերայ երկրի. և նա էր սկայ որսորդ առաջի Տեառն Աստուծոյ. վասն այնորիկ ասեն, իբրև

<sup>1</sup> Հայ ժողովրդական հեքիաթներ, հատ. IV, Երևան, 1963, էջ 222:

զՆեբրովթ սկայ առաջի Տեանն Աստուծոյ: Եւ եղեւ սկիզբն թագաւորութեան նորա Բաբելովն. և Որէդ, և Աքադ. և Քաղանէ յերկրին Սենայար: Յերկրէն յայնմանէ ել Ասուր, և շինեաց զՆինուէ, և զԴոբովթ քաղաք. և Քաղան. և զԴասեման 'ի մէջ Նինուէի և 'ի մէջ Քաղանայ. այն է քաղաք մեծ»: Այս տեքստից ամենևին չի բխում ո՛չ Նեբրովթի կապը աշտարակաշինության հետ, ո՛չ նրա աստվածամարտությունը, ո՛չ էլ նույնությունը Բելի հետ, որի վերաբերյալ պնդումներ կան հայ պատմիչների մոտ: Հայերենի «(h)սկայ» որակումը, որ այլ լեզուներով և աշխարհաբար փոխանցվում է որպես «զորավոր» կամ նույնիսկ «թագավոր» հայերի համար ունեցել է բավական միանշանակ իմաստ՝ հսկա, գիգանտ, խոշորամարմին և ուժեղ: Հայկական առասպելաբանության համար այդ բառիմաստը, թերևս, որոշիչ է, և դիտարկված տարբերակների մեծ մասում Նեմրուֆի հսկա լինելը հատուկ շեշտվում է:

Նեբրովթի և Աստծո հակամարտությունն ակնհայտորեն արտաքին մոտիվ է, որը մի կողմից ընկած է Նեմրուֆի մասին հայկական առասպելի հիմքում, մյուս կողմից, սակայն, ի հայտ է գալիս ոչ միայն ժողովրդական պատումներում:

Մովսես Խորենացին Նեբրովթի մասին գրում է. «... եւ բազումք 'ի ժամանակագրաց զՆեբրովթ. որ է Բէլ, եթովպացի գոլ ասելով՝ հաւանեցուցին զմեզ այսպէս հաւաստի լինել...»<sup>1</sup>: Եվ այլուր նույնպես նույնացնում է Նեբրովթին և Բելին. «ԶԲէլայ, առ որով նախնին մեր Հայկ, բազումք բազում ինչ այլ ընդ այլոց պատմեն, բայց ես ասեմ զԿռոնոսդ անուն և զԲէլ՝ Նեբրովթ լեալ...»<sup>2</sup>:

Աստվածաշնչյան հնություններին անդրադարձած հայ այլ պատմիչներ ևս հիշատակում են Նեբրովթին: Թովմա Արծրունին գրում է. «ոմն Բելոս հայր Դիայ, որ կոչի հայերէն Արամազդ»<sup>3</sup>, այսինքն, խոսքը Բել աստվածության մասին է: Նեբրովթը ըստ նրա, որոշ չափով նմանվելով Հերակլեսին և Ալեքսանդր Մակեդոնացուն, իրեն աստվածություն է հայտարարել, բայց ավելի հեռուն է գնացել՝ ասել է, թե ինքը նույն այն հնագույն Բելն է «ոչ հայր Աստծոյ, այլ և հրամանատու Արամազդայ»<sup>4</sup>: Այնու-

<sup>1</sup> **Մովսէս Խորենացի**, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, Ս. Ղազար, 1827, էջ 34:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 41:

<sup>3</sup> **Թովմայի վարդապետի Արծրունոյ** Պատմութիւն տանն Արծրունեաց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 21:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 21:

հետև Արծրունին ներկայացնում է Նեբրովթին որպես վեց կանգուն հասակ ունեցող հսկա և ուժով ու կախարդությամբ երկնքի տակ եղած բոլոր երկրների և ժողովուրդների նվաճող: Նա է, որ կանգնեցնում է հսկաների, քաջերի և հին թագավորների արձանները և ստիպում պաշտել որպես աստվածների, այսպիսով սկիզբ դնելով պատկերապաշտությանը: Եվ նա է, որ կառուցել է տալիս երկնասլաց բուրգը. «... ամբարտաւանեալ մոլեգնականս տալ հրաման զանխորհուրդ միաբանութեան զրաջան վաստակոց, կանգնել բուրգն յերկրէ, որոյ գլուխն հասցէ յերկինս. և կանխավազ ցրմամբն ի վերուստ՝ զմիաբարբառ լեզու մարդկութեան շփոթեաց յայլաբան խլրտինս...»<sup>1</sup>: Սակայն, երբ խոսքը Հայկի հետ մենամարտելու մասին է, Թովման վերստին Բել է անվանում նրան, շեշտելով, որ այդ հզոր թագավորը ևս անմահ չէր և բերելով Հաբեթի տան Թորգոմի որդի Հայկի խոսքը. «... ոչ միայն զի չես աստուած՝ այլ շուն դու, և երամակ շանց՝ որ զկնի քո տողեալ սահին»<sup>2</sup>:

Ինչպես տեսնում ենք, Թովմա Արծրունին նույնացնում է Նեբրովթին և այն Բելին, որին նետահարում է Հայկ նահապետը: Մյուս կողմից, նա ակնարկում է նաև աշտարակաշինությունը և լեզուների խառնվելը, թեև չի հիշատակում աշտարակի փլուզվելը:

Մինչդեռ Վարդան Արևելցին արձանագրում է փոքր-ինչ այլ ավանդույթ, որ գուցե կենցաղավարում էր ժողովրդի որոշ հատվածի մեջ իր ժամանակներում: Այդ ավանդույթը, ինչպես և Խորենացու փոխանցածը, միացնում է աստվածաշնչյան սյուժեները և Հայկ նահապետի պատմությունը:

Վարդան Արևելցու մոտ պատմությունը կապվում է Եբեթի որդի Փառեկի հետ: Վարդանը Փառեկի անունը թարգմանում է որպես «բաժանումն», քանի որ նրա օրոք վերակազմավորվեց հողերի բաժանումը, որ երբեմնի կատարել էր Նոյը<sup>3</sup>: Վերաբաժանումից հետո մարդիկ նորից միավորվում են և որոշում են գնալ դեպի արևելք՝ դրախտը տեսնելու, քանի

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 23:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 23:

<sup>3</sup> **Վարդան Բարձրաբերդցի**, Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1864, էջ 16: Եբեթի որդի Փաղեգին հիշատակում է նաև Թովմա Արծրունին, բայց ոչ աշտարակաշինության, այլ կոսապաշտության հիմնադրման առնչությամբ: Քանի որ նա, ինչպես և Թարայի որդի Առանը, վախճանվել էր իր հորից առաջ, հայրը պատրաստել է տալիս նրա պատկերը, տես՝ **Թովմայի վարդապետի Արծրունւոյ**, նշվ. աշխ., էջ 23:

որ լսել էին, որ նախնիներն այնտեղից են ելել: Որոշ ճանապարհ անցնելուց հետո հասնում են ծովին, քանի որ դրախտն անջրպետված էր մարդկային բնակության վայրերից: Վերադառնալով, որոշում են, որ ծովը բարձրացել է և կլանել է դրախտը, պիտի ավիրի նաև իրենց բնակավայրը: Ուստի հղանում են մի բարձր աշտարակի կառուցման գաղափարը՝ աշտարակի, որի վրա իրենք պետք է փրկվեին, երբ ջուրը հասներ այդտեղ: Նրանք գնում են Սենաար երկիրը, Քաղանե դաշտը և սկսում են կառուցել աշտարակը՝ ոսկի և արծաթ սանդուղքներով, ակներով զարդարված պատուհաններով: Քառասուն տարի անընդմեջ շինելով՝ նրանք աշտարակը հասցնում են մինչև անտեսանելի եթերը, ուր թռչունները չեն հասնում: Այդտեղ կիզիչ արևից սկսում է հալվել աշտարակի ոսկին, և միայն Աստծո ողորմությամբ մարդիկ կարողանում են փրկվել կիզվելուց՝ լուց<sup>1</sup>: Այնուհետև Վարդանը շարադրում է ավանդագրույցն այնպես, ինչպես այն պահպանվել էր «'ի տանն Նեբրովթայ»։ մի հրեշտակ է հայտնվում Նեբրովթին, որն իշխան էր և որսի միջոցով ապահովում էր շինարարների սնունդը: Նա հայտնում է, որ մարդիկ չեն կարող սանդուղք սարքել դեպի Աստված, այլ միայն Աստված ինքը կարող էր իր ժամանակին սանդուղք տալ նրանց, որ իր մոտ գան: Սակայն հրեշտակին չեն լսում: Այնժամ Տերը դրախտի բուրմունքն է ուղարկում մարդկանց, որոնք դրանից արբենում են և մոռանում են իրենց սկզբնական լեզուն: Հետո մի հողմ է ուղարկում, որ քայքայում է աշտարակն այնպես, որ մարդիկ ուղղակի սահում են ցած, և զոհեր չեն լինում: Եվ ահա հին փոքր-ինչ կոպիտ լեզվի փոխարեն առաջանում են հելլենացիների, հռոմայեցիների, ասորիների, ալանների, պարսիկների, հնդիկների, հայերի և այլ լեզուները: Անդրադառնալով Բելին, Վարդան Պատմիչը նշում է, որ վերջինս «հպարտացեալ յանճոռնի հասակն իւր, որ էր վաթսուն կանգուն»<sup>2</sup>, հպատակեցնում է բոլորին և ստիպում պաշտել իրեն իբրև աստծո: Բոլորը, բացի Թորգոմի որդի Հայկից, ենթարկվում են նրան: Հայկի նետը խոցում է Բելի սիրտը, գամելով պղնձե տախտակին:

Ինչպես տեսնում ենք, ի տարբերություն Խորենացու և Արծրունու, Վարդան Պատմիչը չի նույնացնում Նեմրուֆին և Բելին, ընդհակառակը,

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 17-18:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 20:

Նեմրույթն իբրև թե ընտրյալ մարդ լինի, որի մոտ գալիս է Տիրոջ հրեշտակը, և Հայկի հակառակորդը նա չէ, այլ ոմն Բելը:

Նման սյուժետով մի զրույց գրառել է Տիգրան Չիթունին:

*Էն վախար ինչ միլաթ ժողված ըսաց oh ճիւր տէղնի, ասին էնիկ ող-  
հաթ ա. մէկ պէտթը շինինք էղնի խէտր էրկնուց. ան գախ ինչ ան ճիւր էլնի՝  
բիթիւն քաշէնք էլնէնք ան պէրթի գլոխ: Ելան ժողվիցին զպէտթի խիմ  
թալեցին, զպէտթ շինեցին, կանցրցին: Ճոթը ընծկուն մէկ քամիմ՝ էխան  
էն քարի հըմեն մէ էրկիր էթալ, էնոնց էղան ինչ ցեղ կա բիլա կանկնած  
են. զըմեն փոխան, էլ մէկ մէկէլի լեզուն չխասկցաւ: Մէկ էղաւ Լամո. մէկ  
էղաւ Ինքլիզ, մէկ էղաւ Պէլ, ախըր լեզին չըն չօկաւ, կեղա յոթանասու-  
ներկու լեզի: Ֆոընկ գնաց Ֆոընկստան, Ընկըլ գնաց Իկիլտարէն, ուռուս  
գնաց Պեդրասալ, Պէլ գնաց Բաղդապ, մեր Խէն՝ Հայկ էր անուն, էկաւ է-  
սա էրկըրներ:*

*Վախըրսմ՝ մնաց, ասէն, Հայկին իրիքխարիր մարթ կէր, Պէլին՝ խա-  
զար խինգ խարիր մարթ էր: Պէլ ըսաւ. «Վոլա, իս տելնիմ էրթամ էն էր-  
կիր. անուշ ճիւր կէր էն էրկիր. խօթօտ սար ու ձոր կայ, գէօզան ա, խօ-  
թօտ էրկըրքեր կէն ան տեղ, իս տերթամ, Հայկի տեղ զավթեմ ձը խմար»:*

*Պէլ էլաւ զուր մարտեր կապեց զուր ասքար, էկաւ: Հայկ էլաւ զուր 3  
խարիր մարթ առակլեց յառէճ: Պէլի ասքար չդիմացաւ յառճն, կոտորաւ  
փախաւ: Պէլ ասքրից չօկաւ: Հայկ ընկաւ յիտն. Հայկ նիտրանեղ էզար  
Պէլի քամակ, փոտվէ էտու տիւս: Պէլ ընկաւ, էմէլ ինքաւ. էլաւ փախաւ:  
Հայկ ընկաւ յիտն գնաց Տըշոդ: Գնաց Տըշոդ տիւտ, Պէլ ընկեր կշտմանց ա-  
պուկեր էր, արև տուեր էր քամակ փոտվէ տուեր էր տիւս, արևու շող փոտվէ  
կերևէր. անոր ընկերներ ըսին. «Տէ՛ շող», անտեղաց անուն մնաց Տըշոդ՝:*

Դժվար է ասել, որքանով է Բերկրիի բնակիչ Խուտոն ծանոթ եղել Վարդան Արևելցու Պատմության տվյալ հատվածին, քանի որ ծանոթ չլինելու դեպքում մենք ունենք ժողովրդական այն սյուժեն, որն արձագանք է գտել պատմիչի երկում: Փաստն այն է, որ այս պատումի մեջ աշտարակաշինությունը չի կապվում Նեմրույթի հետ, որ նաև չի ներկայացվում իբրև թագավոր: Նեմրույթը որպես լավ որսորդ ուղղակի ապահովում է շինարարների սնունդը: Բելը, ընդհակառակը, հպատակեցնում է ժո-

<sup>1</sup> **Տ. Չիթունի**, Պատմություն Հայկի, Արամի, Խոսրովի, Տրդատի Կառխու-Պերկրի գիւղացի Խուտոյից/ ԳԱԹ արխիվ, Տիգրան Չիթունու ֆոնդ, 2-ժԵ, թ. 1-2: Տըշոդի մեկ այլ ավանդազրույցի վերաբերյալ տես ստորև:

ղովրդին և ստիպում է պաշտել իրեն: Խուտոյի պատմության մեջ Նեմ-րուբը հանդես չի գալիս, իսկ Պելը դիտարկվում է սեմական ինչ-որ ժողովրդի նախահայրը, որ զավթողական պատերազմ է մղում հայերի (խէն<sup>1</sup>) նախահայր Հայկի դեմ և ընկնում նրա նետից:

Պատմիչները, հավանաբար, արձանագրում են ժողովրդի մեջ տարածված երկու տարբեր ավանդույթներ. համաձայն առաջինի Նեբրովթն ու Բելը միևնույնն են, և Հայկը սպանում է Նեբրովթ-Բելին, համաձայն երկրորդի Նեբրովթը որոշակիորեն կապված է աշտարակաշինության հետ, բայց առնչություն չունի Հայկի հետ: Ինչպես տեսնում ենք, մինչև 19-րդ դ. վերջը Բաղեշի ժողովրդի մեջ պահպանվել էին գլխավորապես երկրորդ ավանդույթի արտացոլումը հանդիսացող առասպելները, որոնք կապվել են Նեբրովթի անունը կրող լեռան հետ: Վասպուրականի առասպելներն, ընդհակառակը, ավելի մոտ են առաջին ավանդույթին և նույնացնում են Բելին ու Նեմրուբին:

Հ. Ֆոն Վլիսլոբին գրառել է աշտարակաշինության մասին ևս մեկ այսպիսի պատմություն՝ Բուկովինայի հայերից: Այստեղ չի հիշատակվում ո՛չ Նեմրուբի, ո՛չ էլ Բելի անունը, չի նշվում նաև վայրը, որտեղ տեղի է ունեցել իրադարձությունը: Ի հայտ է գալիս այլ տարբերակներին անծանոթ մոտիվը. սատանան գալիս է գոռոզ և հզոր թագավորի մոտ և խոստանում, որ հաջորդ օրը մի բույս է աճելու: Այդ բույսը այնքան բարձր էր, որ դրա գագաթը չէր երևում: Սատանան պահանջում է թագավորից, որ այնպիսի մի աշտարակ կառուցի, որ այդ բույսի պես բարձր լինի: Աշտարակաշինությունը, որի համար թագավորն իր մոտ է բերում երկրի բոլոր վարպետներին, վրդովեցնում է Աստծուն, որը երաշտ է ուղարկում: Երաշտի պատճառով երկրում ջուր չի մնում, և թագավորը գինի է բերել տալիս, որով շինարարները պետք է շաղախ պատրաստեին: Սակայն շինարարներն այդ գինով հագեցնում են իրենց ծարավը և այնպես են հարբում, որ սկսում են միմյանց չհասկանալ և, կռվելով, իրար նետում են աշ-

<sup>1</sup> Վասպուրականի բարբառներում «հայ» հասկացությունը փոխանցվում է այս ձևով, համապատասխան «խէն քրիստոնեն» նշանակում է «հայ քրիստոնյա»: Այդուհանդերձ, այդ նույն բարբառներում նահապետ Հայկի անունը մեծ մասամբ փոխանցվում է հենց «Հայկ» ձևով, ինչպես ակնհայտ է տվյալ պատումի մեջ: Այսպես է եղել, մասնավորապես, Մամուտանում «իր տատի հիշողությունների հիման վրա տեղեկությունը հայտնել է դվինցի Սերոբ Վարդանյանը»: Վանում, ինչպես կտեսնենք ստորև, Հայկը ևս արտասանվում էր խէք:

տարակից ցած: Երաշտին գումարվում է նաև օձերի սաստիկ բազմացումը: Դրանք դուրս են գալիս գետնի տակից ու սկսում են հետապնդել գոռոզ թագավորին: Դրանցից փրկվելով, նա բարձրանում է իր աշտարակի վրա, բայց օձերն այդտեղ էլ նրան հանգիստ չեն տալիս, և Աստված, ողորմալով, կայծակի մի շանթով քանդում է աշտարակը և կործանում թագավորին: Այդ պահից ի վեր նորից սկսվում են անձրևները, և նոր դար է սկսվում բույսերի ու կենդանիների համար<sup>1</sup>:

Հեռավոր Բուկովինայում կապը աշխարհագրական վայրի և առասպելի միջև սղված է, մրջյունները փոխարինված են օձերով, աստվածամարտության մոտիվը փոխարինված է սատանայական գայթակղությամբ, իսկ դրախտի եթերը՝ գինով, սակայն հիմնական սյուժեն պահպանվել է:

Լեզուների բաժանումն, անկասկած, Աստվածաշնչից է փոխառված: Ինչպես տեսանք, մի շարք տարբերակների մեջ այն որևէ դեր չի խաղում, իսկ Ս. Հայկունու տարբերակն իր ողջ բովանդակությամբ կապված է տեղական մշակույթի և դրա որոշակի օբյեկտների հետ: Բուկանդիսի տարբերակը ևս ունի լեզուների խառնվելու մոտիվը: Համաձայն դրա, այստեղ բաժանվեցին 72 ու կես ազգերի «գլխատրները և լեզուները»<sup>2</sup>: Հետագայում ևս հայոց մեջ ընդունված էր, որ աշխարհի բոլոր լեզուները 72-ն են: Այս առումով աշտարակի փլուզումը դիտվում էր նաև որպես նոր աշխարհի սկզբնավորում, պետական սահմանների բաժանումների սկիզբ:

Արդ, ինչու՞ է Խորենացին միևնույն անձը համարում Նեբրովթին և Բելին, մինչդեռ, օրինակ Սեբեոսը չի ճանաչում Նեբրովթ, այլ ունի միայն Հայկի և Բելի հակամարտություն:

Այս պատկերացումը, թերևս, գալիս է Եվսեբիոս Կեսարացուց կամ գուցե ավելի վաղ ավանդույթից, որն ինքը՝ Եվսեբիոս Պամփյուլոսը արձանագրել է իր «Նախապատրաստություն ավետարանի» (Εὐαγγελικὴ προπαρασκευή, Praeparatio Evangelica) աշխատության մեջ: Եվսեբիոսի

<sup>1</sup> H. von Wislocki, Märchen und Sagen der Bukowinaer und Siebengebürgen Armenier, Hamburg, 1891, S. 49-51.

<sup>2</sup> Բենսէ, նշվ. աշխ.// ԱՀ, գ. 2, էջ 29:

9-րդ գրքի 17-րդ և 18-րդ բաժիններում՝ ներկայացված է Նեբրովթի պատմությունը: 17-րդ բաժնում մեջբերվում է Ալեքսանդր Բազմավեպի՝ ոմն Եվպոլեմոսից քաղված մի դրվագ, որի համաձայն ջրհեղեղից փրկվածները կառուցել էին Բաբելոնը, և նրանք բոլորը հսկաներ էին: Նրանք կառուցել էին մի աշտարակ, որը մեծ համբավ ուներ: Սակայն Աստծո կամոք այդ շինությունը կործանվեց, իսկ հսկաները ցրվեցին աշխարհով մեկ: Ահա տասներորդ, կամ տասներեքերորդ սերնդում ծնվեց Աբրահամ անունով մի մարդ, որը գերազանցում էր բոլորին իր իմաստությամբ: Նա էր աստղագիտության և քաղդեական արվեստի (պետք է հասկանալ՝ աստղագուշակության) հիմնադիրը: Աստծո կամոք նա բնակվեց փյունիկեցիների երկրում և այնտեղ ուսուցանում էր իր արվեստը: Սակայն շուտով հայերը<sup>2</sup> արշավեցին Փյունիկիայի վրա և, հաղթանակելով, գերի վերցրեցին Աբրահամի եղբորորդուն: Աբրահամն իր ծառաներով ազատեց նրանց և գերի վերցրեց նվաճողների կանանց և երեխաներին: Այնուհետև որոշ գումարի և սննդի դիմաց ազատեց գերիներին և արժանացավ քաղաքի Արգարիզին կոչվող տաճարի հյուրընկալությանը, մինչդեռ տաճարի անվանումը թարգմանվում է իբրև Ամենից բարձր սար: Այստեղ նա նվերներ ստացավ Մեքիսեդեկի կողմից, որ թագավորն ու քրմապետն էր: Հետո երկրում սով սկսվեց, և Աբրահամը տեղափոխվեց Եգիպտոս: Հետևող հատվածում խոսքը Աբրահամի՝ Եգիպտոսում ապրելու և աստղագիտական ուսմունքը տարածելու մասին է:

18-րդ բաժնում Եվսեբիոսը հենվում է Արտապանի հաղորդման վրա, համաձայն որի հրեաները կոչվում էին Էրմիութ, և Աբրահամն է, որ նրանց տվել է եբրայեցի անվանումը: Այստեղ հետևում է հատվածը, որն իր կարևորության պատճառով ներկայացնենք թարգմանաբար. «Որոշ անանուն աշխատություններում, այդուհանդերձ, գտնում ենք, որ Աբրահամը ծագումով կապված է հսկաներին, իսկ նրանք ապրում էին Բաբելոնիայում և կործանվեցին աստվածներից իրենց ամբարշտության պատճառով: Բայց որ նրանցից մեկը, որի անունն էր Բել, խուսափեց մահից և հիմնավորվեց Բաբելոնում: Նա ապրում էր աշտարակի մեջ, որն ինքն էր

<sup>1</sup> Շարադրանքը բերվում է ըստ Է. Հ. Գիֆֆորդի անգլ. թարգմանության, տես՝ **Eusebius of Caesarea: Praeparatio Evangelica (Preparation for the Gospel)**. Tr. E.H. Gifford (1903) p. 418 c - 420 c.

<sup>2</sup> Հունարեն տեքստում՝ Ἀρμενίους:



կառուցել, և որը կոչվում էր Բել՝ իր կառուցող Բելի անունով: Եվ որ Աբրահամը, որ քաջատեղյակ էր աստղաբաշխական գիտության մեջ, սկզբում եկավ Փյունիկիա և աստղագիտություն սովորեցրեց փյունիկեցիներին, իսկ հետո տեղափոխվեց Եգիպտոս»:

Բուն Նեբրովթի – արդեն Նիմրոդ կոչվող հերոսի – հակադրությունն Աստծուն առաջին անգամ արտահայտություն է գտնում Փիլոն Ալեքսանդրացու աշխատություններում<sup>1</sup>: Մոտիվը հետագա զարգացում է ստանում վաղմիջնադարյան մի շարք հեղինակների, այդ թվում՝ Օգոստինոս Երանելու, Եփրեմ Ասորու և այլոց երկերում<sup>2</sup>:

Հրեական հագադենների ավանդույթը, թարգմանները, Միդրաշը տրամադրում են Նիմրոդին նվիրված գրավոր դրվագների բավականին մեծ զանգված, որի մեջ գտնում ենք ինչպես Նիմրոդի և Աբրահամի հակամարտության, այնպես էլ Նիմրոդին արդարացնող և Բաբելոնի աշտարակաշինության հետ կապ չունեցող, անգամ դրան հակադրվող սյուժեներ<sup>3</sup>:

Պահպանվել է *լադիին* լեզվով կամ եբրայերենի սեֆարդիկ բարբառով մի երգ՝ "Quando el Rey Nimrod", որի մեջ ևս պատմվում է Աբրահամի հրաշալի ծննդյան և Նիմրոդի հետ նրա պայքարի սյուժեն<sup>4</sup>:

Փաստը, սակայն, այն է, որ եբրայական գրականությանը ծանոթ չէ Եվսեբիոսի և Մովսես Խորենացու կողմից արձանագրված երևույթը՝ Նեբրովթ-Նեմրուֆի նույնացումը Բելի հետ: Հավանաբար, այդ գրականությունը և դրա հիմքը կազմող հայացքներն ու պատկերացումները երբևէ հայերին հասու չեն եղել: Ավելին, դա առասպելաբանության բոլորովին այլ ճյուղ է, որ տարածվել է, թերևս Կարմիր ծովի արևելյան ափից դեպի հրեաների տարբեր բնակավայրերը:

<sup>1</sup> **K. van der Toorn, P. W. van der Horst**, Nimrod Before and After the Bible// Harvard theological review, vol. 83, issue 1, p. 17-18.

<sup>2</sup> Այս հարցի վրա բևեռվելն այստեղ նպատակահարմար չէ, քանի որ Նեբրովթի կերպարի աստվածաբանական մեկնությունները ուսումնասիրության առանձին խնդիր են ներկայացնում:

<sup>3</sup> Այս տեքստերի համահավաք քննությունը տես՝ **K. van der Toorn, P. W. van der Horst**, նշվ. աշխ., էջ 19-26:

<sup>4</sup> **B. H. Mehlman**, The Maaseh Avraham Avinu Alav HaShalom: Translation, Notes, and Commentary// CCAR journal: The Reform Jewish Quarterly, spring 2012, pp. 5-22.

Այն, որ **Նեմրութի պատմությունը կապվել է պատմական Հայաստանի տարածքում գտնվող աշխարհագրական վայրի, առանձին քարաշարքի հետ** և պատմվել է որպես նախապատմական ճշմարտացի գրույց, վկայում է սյուժեի հին և տեղական լինելու մասին: Մյուս կողմից, Խլաթը և Հարքը որքան էլ Միջագետքին ամենամոտ գտնվող տարածքները չեն, բայց մշակութային առումով սերտորեն կապված են Միջագետքի հետ: Մասնավորապես, այդ վայրերում մինչև հայաթափությունը տարածված էր միջագետքյան նիպուրյան տոմարը, այդտեղ բնակվում էն բավական մեծ թվով ասորիներ: Հայկական առասպելի ինքնուրույնությունն ակնառու է, ինչպես անվիճելի են նաև միջագետքյան ազդեցությունները:

Թերևս, ասորական ամենահին հուշարձանը, որտեղ հանդիպում է Նիմրոդի մասին փոքրիշատե ընդարձակ պատմությունը, սիրիական «Գանձերի քարանձավը» պարականոն տեքստն է, որի ստեղծումը Ուոլլիս Բաջը կապում է 6-րդ դ. հետ<sup>1</sup>:

Այստեղ Նիմրոդը արքա է, որն ընդունում է գրադաշտական կրոնը և հիմնադրում է կրակի և սպիտակ ձիու պաշտամունքը: Թեև ինչպես երբայերեն տեքստերում, այնպես էլ այստեղ նա հակադրվում է Աբրահամին, Աստծո դեմ ապստամբելու, աշտարակաշինության, առավել ևս՝ Աստծո կողմից պատժվելու վերաբերյալ այստեղ ոչինչ չի ասվում:

Աբրահամն ու Նիմրոդը համատեղ հանդես են գալիս նաև արաբական գրույցներում: Ուշ շրջանի բանահյուսության մեջ Նիմրոդի վազիրն էր Իբրահիմի հայրը՝ Ազարը կամ Թերան: Այդ Նիմրոդն այնքան ամբարտավան էր, որ ստիպում էր իր հպատակներին իրեն իբրև աստված պաշտել: Լսելով Իբրահիմի պաշտած Աստծո մասին, Նիմրոդը մտադրվում է կամ տեսնել, կամ անգամ սպանել Նրան: Նիմրոդը կառուցում է մի բարձր աշտարակ, որով կկարողանար հասնել երկնքին: Երբ այդ աշտարակը կառուցվում է մինչև յոթանասուներորդ հարկը, Աստված խառնում է շինարարների լեզուները, որոնք սկսում են խոսել 73 լեզվով: Չհասնելով իր նպատակին, Նիմրոդը մի թռչող սարք է շինել տալիս: Դա մի մեծ արկղ էր, վրան երկար ձող ամրացված: Ձողի վրա դրված էր

<sup>1</sup> **The Book of the Cave of Treasures**, a History of the patriarchs and the kings their successors from the creation to the crucifixion of Christ, transl. E. A. Wallis Budge, L., 1927, p. XIII.

հում միս, իսկ Արկղի չորս կողմից կապված էր մեկական արծիվ: Ձգտելով մսին, արծիվները վեր են բարձրացնում արկղը, որի մեջ նստում են Նիմրուդը և իր նետածիգ ծառան: Երբ նրանք բարձրանում են այնքան վերև, որ երկիրը հագիվ է երևում, Նիմրուդը հրամայում է նետածիգին նետեր արձակել դեպի երկինք, սակայն ինքը կանխավ պատրաստած է լինում արյան մեջ թաթախված նետեր: Երբ բոլոր նետերը արձակված են լինում, և կապարճը դատարկվում է, նրանք իջեցնում են միսը և ցած նետում արկղի տակի անցքից: Անմիջապես արծիվները նրանց իջեցնում են ցած, և Նիմրուդը բոլորին ներկայացնում է արյունոտ նետերը՝ ի նշան այն բանի, թե ինքը սպանել է Աստծուն: Այդ ժամանակ Աստված հրամայում է ավազաճանճին մտնել Նիմրուդ հսկայի քիթը: Ավազաճանճը կատարում է հրամանը և հասնում Նիմրուդի ուղեղին: Այն տանջում է Նիմրուդին երկու հարյուր տարի շարունակ, մինչև չար արքան մեռնում է<sup>1</sup>:

Ինչպես տեսնում ենք, որոշակի նմանություն կա այս պատմության և հայկական առասպելների միջև, թեև արաբական զրույցը աշխարհագրական որևէ օբյեկտի հետ կապված չէ: Բանահավաք Ջ. Ի. Հանաուերը նշում է միայն, որ Մոսուլից ու Բաղդադից Երուսաղեմ ժամանած ուխտավորները պնդում են, թե իրենց երկրում դեռ պահպանվել են Նիմրուդի աշտարակի մնացորդները: Պատմությունը պարունակում է ևս մեկ հետաքրքրական մանրամասնություն: Ջորիները, որոնց վրա նստած՝ Նիմրուդի զինվորները հետապնդում են Իբրահիմին, այդ օրից ի վեր ամուլ են դառնում, թեև մինչ այդ դրանք ընդունակ էին բազմանալու<sup>2</sup>: Այս մոտիվը որոշ չափով մոտենում է Նեմրութի ուղտերի քարանալու մոտիվին: Ընդհանուր առմամբ, սակայն, Նեմրութի հայկական սյուժեն չափազանց տարբեր է Նիմրուդի արաբականից, թեև դրանք կարող էին առաջացած լինել մշակութային ընդհանուր մի դաշտում: Առավել կարևորն այն է, որ հայկական Նեմրութը չի առնչվում աստվածաշնչյան այլ կերպարների, մասնավորապես, Աբրահամի հետ:

Մեր ձեռքի տակ չունենալով ասորական ժողովրդական համապատասխան նյութը, ստիպված ենք բավականանալ բանահյուսական այս զուգահեռով, թեև եթե անգամ Նեմրութի կերպարը հայոց մեջ հայտնի է

<sup>1</sup> J. E. Hanauer, Folk-lore of the Holy Land, Moslem, Christian and Jewish, London, Duckworth and Co., 1907, pp. 26-27.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 28:

դարձել ասորիների միջնորդությամբ, անկասկած, առասպելի բուն սյուժեն և դրա կապը նույնանուն լեռան հետ, ամենայն հավանականությամբ, հայկական է:

Վերոհիշյալ այլեթնիկ ծագումով առասպելաբանությունից Նեմրուօի հայկական շարքը տարբերվում է հետևյալ ինքնուրույն մոտիվներով.

- ա. կապված է Գրգուռ-Նեմրուօի և դրա ստորոտում գտնվող քարերի հետ,
- բ. կապված է Նեմրուօ լեռան գագաթի վրա գտնվող հրաբխային լճի հետ,
- գ. պարունակում է Նեմրուօի և ստորգետնյա ճանապարհով դեպի Մշո դաշտավայրում գտնվող ակունքը հոսող Մեղրագետի մոտիվը,
- դ. Նեմրուօը բնիկ չէ, այլ հայտնվում է հայոց աշխարհում մի շարք երկրներ գրավելուց հետո,
- ե. զանազան տարբերակներում մատնանշվում են Աստծո՝ Նեմրուօի հանդեպ ունեցած զայրույթի տարբեր պատճառներ, այդ թվում՝ Հազրոյի սպանությունը,
- զ. հայկական բոլոր տարբերակներում աշտարակը փլուզվում է, տարբերակների մի մասում՝ կայծակի միջոցով, մյուսներում՝ կատվի կամ շան չափերի հասած մրջյունների կողմից քայքայվելու շնորհիվ,
- է. հավատալիքային շերտում Նեմրուօը շարունակում է գտնվել լեռան մեջ, որտեղից պարսատիկով քարեր է շարտում կամ որտեղ գտնվում է նրա քաղաքը:
- ը. Ս. Հայկունու գրառած տարբերակում պատումը կապվում է Էրունա (Արունք) գյուղի Հազր-բաբա սրբավայրի հետ:

#### **Հայկը և Նեմրուօը հսկաների առասպելաբանության տեսանկյունով**

Հայոց մեջ յուրօրինակ վերաբերմունք է եղել նախաքրիստոնեական անցյալի հանդեպ: Հին դարերից մնացած բազմաթիվ շինություններ, հուշաքարեր և նույնիսկ որոշ բնական օբյեկտներ ժողովուրդը համարել է նախապատմական հսկաների ժառանգությունը: Այդ հսկաները ազգագրական տարբեր շրջաններում կոչվել են տարբեր անուններով. ազնավուր (ազնահուր), Ֆերեզ՝ Արևմտյան Հայաստանում, օհուզ՝ Վայոց Ձորում և այլն: Պահպանվել են բազմաթիվ առասպելներ և հավատալիքներ ազնավուրների և նրանց կառուցած բերդերի, ամրոցների, աշտարակների, նաև Ազնավուրների գերեզմանների, օհուզի քարերի (վիշապաքարե-

րի, վիշապ-կոթողների) մասին<sup>1</sup>: Հսկաները հայոց ավանդական պատկերացումների մեջ հանդես են գալիս մերթ ուժեղ և միամիտ էակներ, որոնց մարդիկ հեշտությամբ խաբում են, մերթ դիվային էություններ, որոնց ահռելի ուժը համեմատելի է բնական տարերքների հետ: Ավելին, հսկաները կարող են արժևորվել մեկ դեպքում դրականորեն (ահռելի ուժի տեր հերոս-նախնիներ), մյուս դեպքում՝ բացասական (իրենց ուժը հաշվարկել չկարողացող կամ չարական արխաիկ կերպարներ):

Հսկաների մասին հայկական առասպելաբանությունը մինչև օրս բավարար կերպով չի ուսումնասիրված, պատմական Հայաստանի տարբեր մասերից գրառված, բայց հաճախ իմաստով ու բովանդակությամբ փոխկապակցված առանձին գրույցներն ի մի չեն բերված: Միայն առասպելաբանության ամբողջ զանգվածն ունենալու դեպքում է կարելի լրջորեն համադրել պատմական-հնագիտական և բանահյուսական-հավատալիքային նյութերը, ինչի արդյունքում ի հայտ կգան մշակութային կապերի և փոխազդեցությունների, նաև էթնիկ ժառանգականության բոլոր կողմերը: Այստեղ, հենվելով Նեբրոլթի և մասամբ՝ Հայկի և Բելի առասպելաբանության վրա փորձ է կատարվում շոշափել գոնե Միջագետք-Հայաստան շառավիղը:

Ս. Եղիազարյանցի շնորհիվ պահպանվել է մի առասպել<sup>2</sup>, որի մեջ աշխարհի պատմությունը ներկայացված է երեք փուլով.

- ա. անմահության և երանության դարաշրջան, երբ արարածներն ու հրեշտակներն ապրում են խաղաղության մեջ և փառաբանում են Աստծուն,
- բ. օղուզների տիրապետության դարաշրջան, երբ հսկա հրեշանման օղուզները կոտորում և ուտում են մյուս արարածներին և պայքարում են Աստծո հրեշտակների դեմ,

<sup>1</sup> Դիվային հսկաների և վիշապների առասպելաբանությունը միանում է լեզվական և առասպելական այն հարթության վրա, որտեղ «վիշապ» բառը նշանակում է հրեշավոր մեծ, վիթխարի: Նեմրոթ լեռան առասպելաբանության մեջ ևս պահպանվել է հիշատակ դրա գագաթին բնակվող և մոտակա Շամիրամ գյուղի բնակիչներին ուտող վիշապի մասին, տես՝ **Գեղամ**, Հնուց բանք. Շահմարա՞ն թէ Շամիրամ// «Բիզանդիոն», Կ. Պոլիս, 1900, թ. 999, էջ 1:

<sup>2</sup> **Ս. Եղիազարեան**, Օղուզն ու մարդը. Երեք դարաշրջան տիեզերքի պատմությունից// «Գեղարուեստ», 1917, № 6, էջ 147-154:

գ. մարդու տիրապետության դարաշրջան, երբ հնարագետ մարդը իր խելքով և խորամանկությամբ, նաև նենգությամբ տեր է դառնում աշխարհին:

Փաստորեն, օղուզ-հսկաների շրջանը դիտվում է որպես նախամարդկային ինչ-որ քաղաքակրթություն. «Լեռնային կիրճերում պատահում են աներակ բերդեր՝ շինուած հսկայական սալաքարերի վրայ: Երևում են նաև հին գերեզմանոցներ... երկար տապանաքարերով: Այդ բերդերը համարում են օղուզներից մնացած շէնքերի մնացորդներ: Գերեզմանները նոյնպես վերագրում են օղուզների շրջանին»<sup>1</sup>:

Ընդհանուր այս առասպելաբանության մեջ են ներհյուսված Հայկի, Բելի և Նեմրութի, նաև Պոռոշ թագավորի մասին ժողովրդական պատումները: Այդպիսի առասպելներով հարուստ էին հատկապես Վասպուրական և Տարոն-Տուրուբերան աշխարհները, որտեղ Խլաթն ու Բաղեշը բացառություն չեն կազմում: Մեր կարծիքով, հենց այս շրջանների առասպելաբանությունն է հիմք հանդիսացել Մովսես Խորենացու Պատմության համապատասխան հատվածների համար: Անհրաժեշտ է նշել, որ այդ առասպելաբանությունը գոնե մասամբ ընդհանուր էր տեղի հայերի և ասորիների համար: Այսպես, Օլաման ասորաբնակ գյուղի շրջակայքի մասին գրելիս, Գ. Սրվանձտյանցը շեշտում է. «... միայն քարեր կան բոսորային կարմիր, և այդ քարերու մեծամեծ բեկորներէն շենքեր կը տեսնվին ‘ի տեղիս տեղիս, զորս կը բացատրեն մեզ կողզանցի հայն և օլամանցի ասորիք, թե Ազնավորաց բերդն են և Ազնավորաց գերեզմանք»<sup>2</sup>:

Մանազկերտի գավառակի Բաղնոց գյուղում էր գտնվում մի գերեզման, որտեղ ըստ ավանդության ամփոփված էր Հայկ նախահոր աճյունը, իսկ գյուղից դուրս մի երկարավուն բլուր կար, որն անվանում էին Ազնավորի գերեզման: Ժողովրդի զրույցի համաձայն, եթե Ազնավորի ծնկները ծալած չլինեին, բլուրը կրկնակի երկար կլիներ: Ավելի վեր, սարի լանջին էր գտնվում հսկայի այգին, իսկ գագաթին՝ Ազնավորի բերդը: Դրանից արևմուտք կար Բոսթան-ղայա անունով մի գյուղ, որի դիմացի մեծ ապառաժի մեջ փորված էին աստիճաններ, իսկ գագաթին կար մի

<sup>1</sup> **Ս. Եղիազարեան**, նշվ. աշխ., էջ 152:

<sup>2</sup> **Գ. Սրվանձտյանց**, նշվ. աշխ., էջ 392:

պարտեզ, որն էլ իր անունն էր տվել գյուղին<sup>1</sup>: Խլաթի հարավային արվարձանը կոչվում էր Ազնավուրի ջրաղացներ<sup>2</sup>: Հավանաբար, նույն Բոստան-ղայա գյուղի մոտակա աստիճանավոր ժայռի մասին տեղեկացնում է նաև Ս. Հայկունին: Ըստ նրա հաղորդած տարբերակի, Ազնավուրը գութան է դրել ու ժայռը վարել, բաժանել ակոսների և սերմ ցանել: Դեռ գարունը չբացված՝ վարունգ, շամամ ու ձմերուկ է հասել այդտեղ: Նա երախայրիք-նուբարը տարել է իր սիրած կռապաշտ թագավորի աղջկան և փախցրել-բերել է նրան, մի բերդ է կառուցել և պահել է աղջկան այդ բերդում<sup>3</sup>:

Մանազկերտի Ազնավուրի բերդը հատկապես կարևորվում է այն բանով, որ գտնվել է գրեթե այն նույն տարածքում, որտեղ պատմվել է Նեմրութի քննվող գրույցը: Մեզ համար այստեղ էլ ավելի կարևոր է Բենսեի այն հաղորդումը, որ Մանազկերտից ոչ հեռու էր գտնվում նահապետ Հայկի գերեզմանը:

Ս. Հայկունին գրառել է հազվագյուտ գրույց Պոռոջ թագավորի գերեզմանի մասին, որը ևս վկայում է, որ Հավունի թրի տեր առասպելական այդ արքան ընկալվել է հսկա և թաղվել է ճիշտ այնպես, ինչպես, ըստ ժողովրդական պատկերացումների, թաղվել են ազնավուրները.

*Քրդեր գիարաթ կասեն այս վայրին ուր Պոռոջի գերեզմանը կայ, որ կընկնի Ասրծկէի ու Խլաթայ սահմանի մէջ. Խանցկընտրուկ գիւղի ներքև ծովեզերքի փլի գլուխ, որ խոր տեղ'մ է: Կասեն, Պոռոջի հասակն շատ երկար լինելուն, չոքեր ու գլուխ կտրած և առանձին հորած են, իրանը եօթուրթ արշին, չոքերն 3-4 արշին, նաև գլխու գերեզմանն 3 արշին տեղ բռնած է<sup>4</sup>:*

Եթե հիշենք, որ Պոռոջ թագավորը առասպելներում կապված է Հարքում գտնվող երկու լճերի՝ Նազուկայի և Խաչվայի հետ, պարզ կդառնա, որ ինչպես Նեմրութն ու Հայկը, այնպես էլ Պոռոջը վերաբերում են նախապատմական հսկաների մասին առասպելաբանությանը:

<sup>1</sup> Ս. Տէր-Մովսիսեան, Հնութիւններ Տաճկահայաստանում// «Համբաւաբեր», 1916, թ. 25, էջ 796:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 798:

<sup>3</sup> Ս. Հայկունի, Բագրեւանդ, Ջրաբաշխ գաւառ, Մասն Ա, Էջմիածին, Մայր Աթոռ, 1894, էջ 322:

<sup>4</sup> ԳԱԹ արխիվ, Ս. Հայկունու ֆ., ցուց. 41:

Երբեմն այդ պատմությունները միահյուսվել են վիպական այս կամ այն՝ հայկական, պարսկական, հերոսների մասին բանահյուսության հետ: Ահա թե ինչու Հայկը, Պոռոջ թագավորը, ինչպես նաև պարսկական հերոսներ Ռուստամը, Ֆահրադը հանդես են եկել որպես գերմարդկային ուժի տեր հսկաներ, և նրանց վարած պատերազմները՝ հսկաների պատերազմներ, յուրօրինակ տիտանոմախիաներ: Անկասկած, այդպիսի նախապատմական հսկաներ էին առաջին հերթին լեռները, որոնց պատերազմներով հարուստ է հայկական առասպելաբանությունը: Հենց լեռնային առասպելաբանության միջնորդությամբ է, որ հսկա Նեբրովթը – լեռ-հրաբուխը - վերածվում է ահեղ Նեմրութի, որը ոչ միայն ձգտում է դեպի երկինք՝ Աստծո մոտ, այսպիսով շարունակելով աճող ժայռերի հինարևելյան առասպելական մոտիվը, այլև պարսատիկով քարեր է նետում լեռն ի վար: Եվ ահա թե ինչու նա փաստորեն մահ չունի, քանի որ ներկայացնում է բնական ուժը, լճի տակ քնած հրաբուխը:

Այստեղ, սակայն, հարկ է անդրադառնալ ոչ այնքան լեռ-դիցույթներին, որքան պատմականացված նահապետ-հերոսներին:

Հայկը նաև Մովսես Խորենացու կողմից է ներկայացվում որպես հսկա և որսորդ, որ, հավանաբար, ժողովրդի աչքերում, ներկայացնում էր ազնավորների դարաշրջանը:

Ինչպես արդեն նշվեց, Հայկի ու Բելի առասպելաբանությունը գրեթե 19-րդ դ. երկրորդ կեսին տարածված էր գլխավորապես Վասպուրականում և Հարքում, և անգամ եթե այդ առասպելաբանության ինչ-որ փշրանքներ արձանագրվել են պատմական Հայաստանի այլ մասերում, ապա կարելի է ենթադրել, որ դրանք արտագաղթել են իրենց կրողների հետ: Քննվող թեմայի շուրջ կարևոր է հիշատակել Վասպուրականի երկու գյուղերի՝ Բելուի և Տշողի վերաբերյալ Ն. Սարգիսյանի գրանցած առասպելները. «Բելու. – Այս այն գիւղ է, ասի յոմանց, յորում էր գերեզման Նեբրովթայ կամ Բելայ... Այլ զայսմանէ երկարագոյն լիցին բանք ‘ի տեղագրութեան գաւառին Հայոց ծորոյ »<sup>1</sup> (շեղագիրը մերն է – Ա. Ժ և Լ. Ս.): Այնուհետև «Տշող. – Որք զԲելու ասեն լինել գերեզման Նեբրովթայ, զայսմ գեղջէ ևս զայս օրինակ բան յարմարեն. զՆեբրովթ, ասեն, սպանեալ Հայկայ ‘ի Հայոց ծոր’ հրամայէ զդի նորա բառնալ և տանել ‘ի Բելու. և յանցանել ընդ գիւղս այս’ զի տակաւին սլաքն ‘ի կործս նորա մխե-

<sup>1</sup> Ն. Սարգիսեան, նշվ. աշխ./, էջ 251:



ալ կայր, իբրև արտաքս արշեալ հանին, շող արևուն, ասեն, թափ անցեալ ընդ վիրամէջն՝ անտի անուն գեղջս կոչեցաւ Տշող»<sup>1</sup>: Սա վերը մեջբերված Տ. Չիթունու գրառած ժողովրդական զրույցի ևս մեկ տարբերակ է, որի մեջ, ինչպես տեսնում ենք, Բելի գերեզմանը Բելու գյուղում է և ոչ՝ Նեմրութ լեռան գագաթին:

Հայկը և Նեմրութը (և ոչ՝ Բելը), կարծես թե Բաղեշի ոչ մի առասպելում չեն հանդիպում, սակայն փաստն այն է, որ Նեմրութ կամ Գրգուռ լեռան գագաթը համարվում էր և՛ Աստծո կողմից կործանված Նեմրութի, և՛ Հայկի կողմից սպանված Բելի գերեզմանը: Հիշենք, որ բուլանըխցիների հավատալիքի համաձայն, Հայկի գերեզմանը ևս գտնվում էր Նեմրութ լեռից ոչ հեռու, Մանազկերտի մոտակայքում:

Այդ պատկերացումներն իրենց արտահայտությունն են ստացել միևնույն վայրին վերաբերող բոլորովին այլ առասպելի մեջ, որը հայտնի է շնորհիվ Գարեգին Սրվանձտյանցի<sup>2</sup>: Համաձայն այս պատումի տեղացիները վերոհիշյալ քարերն անվանում էին Բելի ուղտեր և ուղտապաններ: Բելը այն կռապաշտ թագավորն է, որ մեծ զորքով եկել էր հայոց թագավորի ու երկրի վրա կռիվ, և հայոց թագավորը սպանել էր նրան Աստծո ձեռքով: Հետո հանել էր Նեմրութ սարի գլուխ, տեղը փորել, թոնիր սարքել, Բելին կախել էր այդ թոնրի մեջ ու վառել: Աստծո հրամանով կրակը ջուր էր կտրել, որ Բելի մոխիրը քամին չտանի: Ինքը Սրվանձտյանցը «Գրգուռա թիկնաց ի վեր» գտնվող Նեմրութ, կամ Նեբրովթ լեռը համարում էր Բելի գերեզմանը<sup>3</sup>:

Ավելի հակիրճ ձևի մեջ, ըստ Ն. Սարգիսյանի՝ «Ըղտու քարեր ասուած տեղը այն տեղն է, ուր սպանուեցաւ Բէլը և կոտորուեցան նորա զօրքերը. այս պատերազմի դաշտին Հայկը Գերեզմանք անունը տուեց»<sup>4</sup>: Սրվանձտյանցի տարբերակում չի հիշատակվում Հայկը, այլ միայն Բելը և հայոց թագավորը, Նեմրութն էլ սար է և ոչ՝ հայոց թագավորի ախոյանը:

Արդ, ինչպե՞ս համադրել այս երկու, միմյանց հակասող և միաժամանակ միևնույն տեղով միավորված առասպելները: Անմա՞հ էր արդյոք Բե-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 253:

<sup>2</sup> Գ. Սրվանձտյանց, նշվ. աշխ., էջ 50:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 34:

<sup>4</sup> Մկօ, նշվ. աշխ., էջ 377:

լը, մինչդեռ Նեմրուօթը անմահ էր այնքանով, որ անձնավորում էր հրաբուխի բնական ուժը, նու՛յնն են արդյոք Բելն ու Նեմրուօթը:

Մեր կարծիքով, Բելի և Նեմրուօթի մերթ նույնացումը, մերթ միմյանցից անջատումը հնարավոր էր միայն մեկ դեպքում – եթե ստույգ պատմության և մարդկային կյանքերի շուրջ պատմվում էր մի առասպել, որն ի սկզբանե հեթանոսական աստվածների մասին է եղել:

Գիտության մեջ վաղուց հիմնավորվել է այն կարծիքը, որ ինչպես աստվածաշնչյան Նեբրովթի, այնպես էլ միջնադարյան տեքստերի Նիմոդ-Նեմրուօթի տակ թաքնված է հնամենի շումերական դիցույթ Նինուրտան (<sup>1</sup>Nin-urta – շում. «մշակվող հողի տեր»): Այստեղ նպատակահարմար չէ դիտարկել այդ աստվածության պաշտամունքի, մշակութային նշանակության շուրջ<sup>2</sup>: Սակայն այն փաստը, որ կերպարի ծագումը Հին Միջագետքի առասպելաբանության մեջ է, որտեղ Նինուրտան ոչ միայն որսորդ և նետաձիգ էր, այլև աստղային կերպարանք ուներ, ոչ միայն երկրագործության, այլև աստղաբաշխության հովանավորն էր, շատ բան է բացատրում Նեմրուօթի հայկական առասպելաբանության մեջ: Նախ և առաջ հասկանալի է դառնում, որ Նեմրուօթի առասպելաբանությունը, որքան էլ ամրագրվել է որպես որոշակի լեռան շուրջ կառուցված շարք, միանգամայն բնական ճանապարհով պետք է ընդհանուր լիներ ասորիների և հայերի համար: Երկրորդ, հասկանալի է դառնում նաև Նեմրուօթի՝ ահեղ օտարական թագավոր լինելը և Աստծո վրա կրակելու մոտիվը, որը ոչ այլ ինչ է, քան նետաձիգի կերպարանքով պատկերացվող աստվածության պայքարը երկնային այլևայլ մարմինների դեմ, որ հայտնի է շումերական առասպելներից:

Սակայն Նինուրտան, ինչպես և սպասելի էր հեթանոսական շրջանի համար, արժևորվում է դրական, մինչդեռ Նեմրուօթը բացասական կերպար է: Կարելի էր ենթադրել, որ այդ կերպարանափոխությունը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ հեթանոսության ընդերքում ձևավորվել և անջատվել է հուդաիզմը, իսկ հետո՝ նաև քրիստոնեությունը: Սակայն եթե այդպես լիներ, Աստվածաշնչում արդեն Նեբրովթը կդիտվեր որպես

<sup>1</sup> C. Uehlinger, Nimrod// Dictionary of Deities and Demons in the Bible, Leiden-Boston-Köln, Brill, 1999, p. 627-628.

<sup>2</sup> Այս հարցի վերաբերյալ տես՝ K. van der Toorn, P. W. van der Horst, նշվ. աշխ., էջ 10-16:

բացասական հերոս և ոչ՝ «հզոր որսորդ Աստծո առաջ»: Հետևաբար, գործ ունենք արտասատվածաշնչյան մի ավանդույթի հետ:

Նինուրտայի աստղային էությունը հայկական Նեմրուօթը չի պահպանել: Պահպանել է, որքան էլ տարօրինակ է, Հայկ նահապետը: Ինչպես հայտնի է, Օրիոն համաստեղությունը միջնադարում հայերը կոչել են Հայկ, իսկ Կշեռք աստղերի վերաբերյալ առատ նյութ կա ժողովրդական տոմարին (գիշերային ժամերի անվանումներին) վերաբերող նյութում:

«Վանեցիները մինչև այսօր Կշիռ կոչված աստղերը անուանում են «խէքէր»... Երբ Բագումք աստղերից յետոյ հորիզոնի վերայ բարձրանում են Կշիռ աստղերը, վանեցիք ասում են. «խէքէրն էլան». երբ մտնեն դէպի արևմուտ, ասում են «խէքէր մտան»: Հետն էլ վանեցիք ասում են, որ «Հայկն երեք լաճ ունէր, երեք աղջիկ, որ ասոնք են», ցոյց տալով խէքերը երկնակամարի վերայ»<sup>1</sup>: Հայկի անունով Օրիոն համաստեղությունը կոչելը ևս արտահայտություն է գտել ժողովրդական բանահյուսության մեջ, ինչպես Վանա հայրեններից մեկում. «Էլաւ Խէյք, էլաւ լիւսին/ Կան եկան (զբոսնեցին) մէջ վարդնոցին»<sup>2</sup>: Սակայն հսկա Խէքը հայ բանահյուսության մեջ կարող է հանդես գալ նաև իբրև բացասական կերպար՝ յոթունանի ծիսն հեծնող դև<sup>3</sup>:

Հրեական և ասորական միջնադարյան պատումներում և Թովմա Արծրունու մոտ Նեբրովթ-Նիմրոդը հանդես է գալիս որպես աստղաբաշխության մեծ գիտակ, սակայն որոշ տեքստերում այդ գործառույթը վերագրվում է նրա ախոյան Աբրահամին: Չի բացառվում, որ նման փոխակերպում տեղի է ունեցել հայկական բանահյուսության մեջ ևս, և աստղային կերպարանքը Նեբրովթից փոխանցվել է նրա ախոյան Հայկին: Սակայն այստեղ առաջարկում ենք, մեր կարծիքով, ավելի հավանական վարկածը. որ հնամենի Նինուրտայի կերպարը, անցնելով երկրե-երկիր և նոր մոտիվներով համալրվելով, հայկական հողում, ուղղակի երկատվել է: Նրա հատկանիշների մի մասը մարմնավորվել է Հայկի, մյուսը՝ Բելի մեջ: Այսպիսով, Հայկը «Ժառանգել է» Նինուրտայի դրական հատկությունները, Բելը և որոշ չափով հայկական Նեմրուօթ՝ բացասականները: Այդ է պատճառը, որ Հայկը ըստ Խորենացու ըմբոստացել և հեռացել է

<sup>1</sup> Գ. Աղանեսնց, Վանայ կեանքից// «Լուսնայ», 1898, գ. Բ, էջ 289:

<sup>2</sup> Գ. Շէրենց, Վանայ սագ, առաջին մաս, Թիֆլիս, 1885, էջ 52:

<sup>3</sup> Խէք// Ազգագրական հանդես, գ. XXIII, էջ 174-180:

Բաբելոնից, իսկ Բելը Հայաստան (ի դեպ՝ Հարք և Վասպուրական) եկել է՝ Հայկին հետապնդելով: Սակայն Հայկի ըմբոստացումը Աստծո դեմ չէ, քանի որ հայերի մեկնաբանությամբ, նա ազգային գաղափարի, անկախության համար պայքար մղողի կերպար է, բոլոր հայերի նախահայրը: Այս է նաև պատճառը, որ Նեմրուֆի անցումը Միջագետքից դեպի Հարք առհասարակ ոչնչով մոտիվացված չէ: Վերջապես, այս է մի շարք տարբեր առասպելների և իրարամերժ մոտիվների առկայության գլխավոր պատճառը:

Հնարավոր է նաև պատմական իմաստափոխությունների բոլորովին այլ սցենար. Հայկը և Բելը կարող էին լինել ոչ թե Նինուրտա աստվածության, այլ հենց երբեմնի երկակի Նեմրուֆ հերոսի երկու կողմերը՝ դրական և բացասական: Այս վերջին ենթադրության օգտին է խոսում, մասնավորապես, Վարդան Արևելցու տարբերակում Նեմրուֆի դրական կերպարը, որ, թերևս, ավելի հիշեցնում է Հայկին, քան բռնակալ Բելին:

#### **Հազր-բաբա**

Վերադառնալով Ս. Հայկունու գրառած տարբերակին, նշենք, որ այն միակն է, որ կապում է առասպելը կենդանի ծեսի և սրբավայրի հետ: Մյուս ոչ մի տարբերակում որևէ հուշում առ այն, որ Ուղտի քարերի մոտ գնացել են պաշտամունքային նպատակներով, կամ, ընդհակառակը, խուսափել են դրանցից, այդ վայրով անցնելու արգելք կամ զգուշացում է եղել, կամ այդտեղից անցնելիս որևէ պարտադիր գործողություն է կատարվել կամ տեքստ է արտասանվել՝ չկա: Ուղտի քարերն անսովոր էին միայն իրենց ուրվագծով, դրանց շուրջ պատմում էին բացատրական առասպելներ, որ կապված էին Նեմրուֆ հրաբուխ-լեռան և Նեմրուֆ թագավորի հետ, ոչ ավելին: Բոլորովին այլ է Հազր Բաբա սրբավայրը՝ ճրջմարտախոսության իր երդումով, որ բացատրվում է առասպելի մեջ Հազրոյի՝ իր **ճշմարիտ վկայության** համար նահատակվելու պատմությամբ: Այսինքն, այս միակ դեպքում առասպելն ու պաշտամունքը կապվում են:

Էրունա, կամ Արունք գյուղը ևս գտնվել է Նեմրուֆ լեռան ստորոտում, և ունեցել է երկու եկեղեցի<sup>1</sup>: Հնարավոր է, որ այդ եկեղեցիներից մեկն էր Հազր-բաբա սրբավայրը: Այդ սրբավայրի վերաբերյալ մեզ հաջողվեց գտնել ևս մեկ լակոնիկ տեղեկություն: Մշո դաշտի արևելյան մասի առա-

<sup>1</sup> Թ. Խ. Հակոբյան, Ս. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հատ. 1, Երևան, 1986, էջ 510:

վել հայտնի և ուխտավորների մեծ թիվ ունեցող սրբավայրերի ցանկում նշվում է նաև «Հերոն գիղի Հազըր-Պապա»<sup>1</sup> առանց որևէ այլ բացատրության: Հազրո անունով սրբի վերաբերյալ որևէ այլ նյութ առայժմ գտնված չէ:

Մեր այս հակիրճ հետազոտության համար կարևոր ևս մեկ նյութ կապված է արդեն ոչ թե Տարոն-Տուրուբերանի, այլ Խարբերդի շրջանի հետ: Բանն այն է, որ Ադիյամանի մոտ է գտնվում Տավրոսի լեռնաշղթայի՝ ներկայումս Նեմրութ-դաղ կոչվող ևս մեկ լեռ, որը հայտնի է դրավրա հայտնաբերված՝ Կոմմագենե թագավորության օրոք կանգնեցված հսկա արձաններով: Այս երկրորդ Նեմրութից ոչ հեռու, Ծովք լճի մոտ կա ևս մեկ լեռ, որի անունն է Հազր-բաբա: Այդ լեռան ստորոտում է, հավանաբար, գտնվել հայկական ժողովրդա-քրիստոնեական մեկ այլ սրբավայր՝ միևնույն Հազր-պապա անունով<sup>2</sup>: Գոյություն ունի թուրքական առասպել, կապված այդ սարի և Ծովք լճի հետ, որը նույնպես կոչվում է Հազար-Գյոլ: Հասկանալի է, որ պատահական համընկնումն այստեղ բացառվում է: Սակայն տվյալների սղությունը, այդ թվում՝ Նեմրութի մասին տեղական հայկական բանահյուսության բացակայությունը, թույլ չի տալիս առաջ անցնել այն ենթադրությունից, որ երբեմն այս կողմերն են գաղթել Վանա լճի հարևանությամբ գտնվող Նեմրութ լեռան և սուրբ Հազրոյի մասին առասպելաբանության կրողները:

## ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՆԵՐՐՈՎԹԸ ԵՎ ՆԵՄՐՈՒԹ ԹԱԳԱՎՈՐԸ ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

*Անուշավան եպս. Ժամկոչյան, Լիլիթ Սիմոնյան*

**Բանալի բառեր** - Նեմրութ, Հազր-բաբա, առասպել, աստվածամարտություն, հրաբուխ, Նինուրպա

Նեմրութ թագավորի մասին հայկական առասպելական շարքն իրենից ներկայացնում է աստվածաշնչյան մոտիվների, նախաքրիստոնեական Միջագետքի առասպելների և տեղական մոտիվների ուրույն խառնուրդ: Նեմրութի մասին

<sup>1</sup> Մշոյ աշխարհ// «Լումայ», 1899, գ. Ա, էջ 107:

<sup>2</sup> Ս. Մելիք-Բախչյան, Հաոց պաշտամունքային վայրեր, Երևան, 2009, էջ 233: Հեղինակի նշումով, Հազր-պապա սրբավայրը գտնվել է Խարբերդ քաղաքում:

սյուժեներին տուրք են տվել մի քանի էթնոսներ, միջնադարյան գրողներ: Հայոց մեջ Նեմրոթ թագավորը կապվել է հրաբխային գագաթի հետ, որի վերխոյացումը նմանեցվել է Բաբելոնի աշտարակաշինությանը, իսկ ժայթքումը՝ աստվածամարտությանը: Բնական երևույթների գեղարվեստական նկարագրությունը, միախառնվելով աստվածաշնչյան մոտիվներին և Մերձավոր Արևելքում կենցաղավարող Նինուրտայի, հետո էլ Նեբրովթ-Նիմրոդ մասին զանազան պատկերացումներին, արդյունքում կապվել է պատմական Հայաստանի որոշակի աշխարհագրական վայրի հետ, որի անունն իսկ անբաժան է իր առասպելից: Իր մեկ ճյուղով այդ առասպելաբանությունն առնչվում է հայ ժողովրդի կազմավորման, Հայկ նահապետի շուրջ եղած նախնական պատկերացումների հետ: Իր ամբողջ բնապաշտական-հեթանոսական բովանդակությամբ հանդերձ, առասպելական այդ շարքը ամփոփվում է քրիստոնեական բարոյախոսության ձևով, իսկ Խլաթի առավել հարուստ ժողովրդական տարբերակում՝ նաև կապվում է ժողովրդաքրիստոնեական սրբավայրի հետ:

## БИБЛЕЙСКИЙ НИМРОД И ЦАРЬ НЕМРУТ В АРМЯНСКОМ ФОЛЬКЛОРЕ

*Եր. Անուշավան Զամկոչյան, Լիլիտ Սիմոնյան*

*Ключевые слова* - Немрут, Хазр-баба, миф, богоборчество, вулкан, Нинурта

Библейский текст о великане Нимвроде рассказывает о возвеличении стрелка, об основании им городов. Однако в средневековой литературе, в т. ч. армянской, и в фольклоре нескольких народов известны мотивы богоборчества Нимврода. В армянском фольклоре сохранились сказания о царе Немруте, объявившем себя богом и стрелявшем в небесного Бога из лука, в результате чего построенная им башня рушится, а на ее месте образуется озеро. Географический ареал распространения этого мифа совпадает с ареалом мифов о прародителе армян Хайке и его войне с Белом. Однако варианты мифа выявляют две разные традиции, по одной из которых Немрут – это тот же Бэл, соперник Хайка, по другой – это разные персонажи. В любом случае легенды о Немруте, Хайке и Бэле вплетаются в общую мифологию про великанов – то положительных героев, то глупых или злых дэвов. На основе анализа всех вариантов мифов вокруг горы-вулкана Немрут и их сравнения с литературными источниками делается вывод о том, что в армянской мифологии образ месопотамского божества Нинурты разделится на отрицательного Бэла и положительного Хайка. Богоборческий мотив превратился в мотив

освободительной борьбы и основания армянского народа. В Хайке сохранилась также астральная функция Нинурты.

В единственном варианте, записанном С. Айкуни, история царя Немрута связывается со святилищем Хазр-баба на склоне горы Немрут, известным местом паломничества и клятв.

## THE BIBLICAL NIMROD AND KING NEMRUT IN ARMENIAN FOLK-LORE

*Bishop Anushavan Zhamkochyan, Lilit Simonian*

**Keywords:** *Nemrut, Hazr-baba, myth, theomachy, volcano, Ninurta*

The biblical text on the giant Nimrod tells about the progress of the archer, about founding of cities by him. However in the medieval literature, in the Armenian literature as well, the motif of opposition of Nimrod with God is present. In the Armenian folk-lore legends on King Nimrod, who had proclaimed himself a god and shot the celestial God preserved. As a result of his hybris the tower built by him was ruined and a lake took its place.

Geographical area of distribution of that myth coincides with that of the myth about the ancestor of all Armenians Hayk and his war against Bel. But variants of that myth reveal two different traditions, according to one of which Nemrut is the same person as Bel, the counterpart of Hayk, and according to the other – they are different protagonists. In any case, legends about Nemrut, Hayk and Bel are weaven into the general mythology on giants – once positive protagonists, once stupid or mean *devs*. Analyzing all the variants of myths around mount-volcano Nemrut and comparing them with literary sources a conclusion is made that the image of the Mesopotamian deity Ninurta splitted into negative Bel and positive Hayk in the Armenian mythology. The motif of thomachy rebellion against God turned into liberalization fight and initiation of the Armenian folk. Hayk also preserved the astral functions of Ninurta.

In the single variant recorded by S. Haykuni, the story of King Nemrut is connected with a sanctuary on the slope of mount Nemrut called Hazr-baba, a well-known place for pilgrimage and oaths.